*A.SPENDIARIAN* OPERA AND BALLET NATIONAL ACADEMIC THEATRE, NON-COMMERCIAL STATE ORGANIZATION, OBT NCSO

"НАЦИОНАЛЬНЫЙ АКАДЕМИЧЕСКИЙ ТЕАТР ОПЕРЫ И БАЛЕТА им. А.СПЕНДИАРЯНА" ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ, ТОБ ГНКО

www.opera.am

«Ա.ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ, ՕԲԹ ՊՈԱԿ

Հայաստան, Երևան 0002, Թումանյան 54, Հեռ.՝ 52 02 41, ֆաքս՝ 52 02 41, էլ.փոստ՝ **info@opera.am**

54, Tumanian Str., Yerevan 0002, Armenia, tel:(+374 10) 52 02 41, Fax:(+374 10) 52 02 41 e-mail: info@opera.am

2/483

17 նոյեմբերի 2014թ.

**«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8» ծածկագրով**
**գնման ընթացակարգով շրջանակային**
**համաձայնագրեր կնքած մասնակիցներին**

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն>> ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու Գնումների աջակցման կենտրոնի և Ձեր միջև կնքված N ՇՀԱՊՁԲ-11/8 շրջանակային համաձայնագրի համաձայն, կից ներկայացվող պայմանագրի նախագծի N1 հավելվածում նշված ապրանքները: Ապրանքներ մատակարարման պայմանները ներկայացված են կից ներկայացվող պայմանագրի նախագծում:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտը անհրաժեշտ է ներկայացնել **N «ՕԲԹ-ՇՀԱՊՁԲ-11/8 - 14/7»** ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին, ք. Երևան, Թումանյան 54 , 5-րդ հարկ, 49 սենյակ, հանձնաժողովի քարտուղար Հ.Գեղամյանին, 2014թ. Նոյեմբերի 27-ին, ժամը 12:00:

Հայտերը կբացվեն, <<Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն>> ՊՈԱԿ-ում, ք. Երևան, Թումանյան 54, 5-րդ հարկ, 49 սենյակում, 2014թ. նոյեմբերի 27-ին, ժամը 12:00:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու մասին դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և / կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և / կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և / կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը:Ընդ որում՝

-նման փաստաթղթերի և / կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,

- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և / կամ տվյալները:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և գնային առաջարկով ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը:

**Թատրոնի տնօրեն՝** Ա.Արզումանյան